Հավելված
ՀՀ Ազգային ժողովի
Տնտեսական հարցերի
մշտական հանձնաժողովի
2020 թվականի փետրվարի 26-ի Թիվ 3-որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի
«Ներդրումների խթանման հարցերով » աշխատանքային խմբի

Գլուխ 1.

I Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգը (այսուհետև՝Աշխատակարգ) սահմանում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) «Ներդրումների խթանման հարցերով» աշխատանքային խմբի (այսուհետ՝ Խումբ) գործունեության իրավական հիմքերը, նպատակները, խնդիրները և գործառույթները, Խմբի կազմը, կառուցվածքը և գործունեության կարգը:
2. Խումբը գործունեությունն իրականացնում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքին և դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերին, ինչպես նաև Աշխատակարգին համապատասխան:
3. Խումբը կազմավորվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:
4. Խումբը գործում է մինչև Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի յոթերորդ գումարման լիազորությունների ժամկետի ավարտը:
5. Աշխատակարգը, ինչպես նաև դրանում փոփոխությունները և լրացումները ընդունվում են Հանձնաժողովի որոշմամբ:

Խմբի նպատակները և գործունեությունը

6. Խմբի նպատակն է ներդրումների խթանման համար օրենքների մշակումը, ինչպես նաև ներդրումային ոլորտում ընդունված օրենքների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը:
7. Խմբի հիմնական խնդիրներն են՝

1) ուսումնասիրել ներդրումների խթանման նպատակով այլ պետությունների կողմից ընդունված օրենքները, ինչպես նաև այլ պետությունների պառլամենտների՝ այս ոլորտում իրականացրած գործունեությունը.
2) ուսումնասիրել ներդրումների խթանման համար անհրաժեշտ մեխանիզմները և քննարկել դրանց կիրառելիության նպատահարմատությունը Հայաստանի Հանրապետության գործադիր մարմնի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև ուսումնասիրության և քննարկումների արդյունքներով պատրաստել համապատասխան առաջարկություններ.
3) մշակել ներդրումային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական փաթեթներ.
4) սահմանել ներդրումների խթանման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակման և ընդունման համար ժամանակացույց՝ հաշվի առնելով իրավական ակտերի ընդունման առաջնահերթությունը:
8. օրենքների նախագծեր մշակելիս համագործակցել հասարակական և այլ կազմակերպությունների հետ:

Գլուխ 2.

ԽՄԲԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Խումբն իրեն վերապահված իրավասությունների շրջանակում՝
   1) առաջարկում է Խմբի գործունեության հիմնական ուղղությունները.
   2) առաջարկում է Խմբի գործունեության ծրագրերը:

3) իրականացնում է (ընտրողաբար) Ազգային ժողովի իրավասությանը վերապահված նախագծերի նախնական քննարկում:
4) իրականացնում է այլ երկրների օրենսդիր գործունեության և իրավակիրառ պրակտիկայի փորձի ուսումնասիրություն.
5) անհրաժեշտության դեպքում մասնակցում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղղությունների վերաբերյալ խորհրդարանական լսումների անցկացմանը, ինչպես նաև մասնակցում է ներդրումների խթանման հետ կապված միջոցառումներին, այդ թվում՝ կոնֆերանսներին, սեմինարներին, կլոր սեղան-քննարկումներին.
6) նախապատրաստում է վերլուծական զեկույցներ և այլ անհրաժեշտ տեղեկատվա-վերլուծական նյութեր.
7) Խմբի անդամների առաջարկությունների հիման վրա իրականացնում է այլ աշխատանքներ.
8) Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ, որոնք բխում են Խմբի առջև դրված խնդիրներից և գործառույթներից.
9) պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններից ստանում է տեղեկատվական նյութեր, որոնք անհրաժեշտ են առաջադրված խնդիրների լուծման համար.
10) Ստեղծում է ենթախմբեր, թեմատիկ բաժիններ, նշանակում է Խմբի կազմից հատուկ զեկուցողներ՝ կոնկրետ թեմաներով զեկույցների համար.

Գլուխ 3.

ԽՄԲԻ ԿԱԶՄԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

10. Խմբի ղեկավարը և անդամները նշանակվում են Հանձնաժողովի որոշմամբ: Խմբում կարող են ներգրավվել պատգամավորներ, փորձագետներ և ոլորտի այլ մասնագետներ:
11. Խմբի քանակական կազմը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:
12. Խմբի նիստի արձանագրումը և գործավարությունը իրականացվում է Խմբի քարտուղարի կողմից:
13. Խմբի անդամները բացառությամբ փորձագետների իրենց գործառույթներն իրականացնում են հասարակական հիմունքներով, կամավորության սկզբունքով:
14. Խմբի անդամներն Աշխատանքային խմբում ներգրավվում են Հանձնաժողովի որոշմամբ՝ Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ ներկայացված պատգամավորներից, եթե առկա է այդ պատգամավորների գրավոր համաձայնությունը:
15. Աշխատանքային խումբը իր գործունեության արդյունքների մասին Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում զեկուցում է Հանձնաժողովի նիստում:
16. Աշխատանքային խմբի անդամն Աշխատանքային խմբում դադարեցնում է իր գործունեությունը՝ այդ մասին Հանձնաժողովի նախագահին գրավոր տեղեկացնելով:
17. Խմբի ղեկավարը՝
1) հանդես է գալիս Խմբի անունից.
2) սահմանում է Խմբի գործունեության հիմնական ուղղությունները.
3) սահմանում է Խմբի գործունեության ծրագրերը.
4) նախապատրաստում և նախագահում է Խմբի նիստերը.
5) գումարում է արտահերթ նիստ.
6) ղեկավարում է Խմբի քարտուղարությունը.
7) համակարգում է ենթախմբերի աշխատանքը.
8) համակարգում է Ազգային ժողովի մարմինների, խորհրդարանական պատվիրակությունների և միջխորհրդարանական բարեկամության խմբերի հետ Խմբի գործունեությունը.
9) Խմբի հաստատմանն է ներկայացնում Խմբի նիստի օրակարգի նախագիծը.
10) ընթացք է տալիս և պատասխանում Խմբին ուղղված գրություններին.
11) Խմբին իրազեկում է նրա որոշումների ընթացքի մասին.
12) նշանակում է Խմբի քարտուղարին.
13) ստորագրում և մակագրում է փաստաթղթեր, որոնք վերաբերում են Խմբի գործունեությանը.
14) տեղաբաշխում է Խմբի անդամների միջև գործառութային պատասխանատվություններ և ներկայացնում առաջարկություններ:
15. Խմբի անդամները Խմբի ղեկավարին գրավոր առաջարկություններ են ներկայացնում Խմբի նիստերի օրակարգերի, հրավիրված զեկուցողների թեկնածուների և այլ հարցերի վերաբերյալ: Խմբի ղեկավարը Խմբի անդամների առաջարկություններին գրավոր կերպով արձագանքում է առաջարկը ստանալուց ոչ ուշ քան մեկ շաբաթվա ընթացքում:
16. Խմբի ղեկավարի բացակայության դեպքում՝ Խմբի ղեկավարի հանձնարարությամբ, Խմբի ղեկավարի գործառույթներն իրականացնում է Խմբի այլ անդամ:

17. Խմբի քարտուղարը ապահովում է Խմբի կազմակերպչատեղեկատվական աշխատանքները, իրականացնում և վերահսկում է Խմբի փաստաթղթաշրջանառությունը (կազմում է օրակարգեր, Խմբի նիստերի արձանագրություններ, նախապատրաստում է Խմբի նիստերի համար անհրաժեշտ նյութեր, Խմբի աշխատանքների նախագծերի պլաններ և դրանց կատարման հետ կապված հաշվետվություններ):
18. Խմբի նիստերը անցկացվում են ըստ անհրաժեշտության՝ առնվազն ամիսը մեկ անգամ:
19. Խմբի արտահերթ նիստերը հրավիրում է Խմբի ղեկավարը՝ իր կամ Խմբի անդամներից մեկի նախաձեռնությամբ: Արտահերթ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:
20. Խմբի նիստերը տեղի են ունենում Ազգային ժողովի վարչական տարածքում: Այլ վայրում Խմբի նիստ կարող է անցկացվել ըստ անհրաժեշտության:
21. Խմբի նիստերն անցկացվում են հրապարակային հիմունքներով:
22. Խմբի նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա է Խմբի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:
23. Խմբի նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ:
24. Խմբի նիստում զեկուցողներին հարցեր տալու, ինչպես նաև Խմբի նիստի վարման կարգի վերաբերյալ ելույթի իրավունք ունեն միայն Խմբի անդամները: Խմբի նիստում ներկա լինելու իրավունք ունեցող այլ անձինք կարող են ելույթ ունենալ Խմբի ղեկավարի թույլտվությամբ:
25. Խմբի անդամները նիստերին մասնակցում են անձամբ:
26. Անհրաժեշտության դեպքում Խումբը կարող է ընդունել հայտարարություններ:
27. Խմբի ղեկավարի որոշմամբ Խորհրդի նիստերի արձանագրությունները և զեկույցները ծառայողական օգտագործման համար կարող են տրամադրվել պատգամավորներին:

* * *